ՄԺԷ.

Բ

Սրբասնուն և գերազանց Հօրդ մերոյ հոգևորի, Տ. Տ. Ստեփանոսի Աստուածաբան Վրդպ.ի և մեծի Սրբայի՝ Սրբոյն Կոստիի որդեգրական Կրօնին մատուցի ի հեռուստ աստի, մեծաւ կարօտիւ և ըղձալիր սիրով համբոյր Սրբազանի Աչոյդ, խնդրելով զաղօթս սրբասնուէրս ի քեզ մատուցեալս, ինձ և իմայնոց, սատար և օգնական

... Այլ և զքաղաքիս պատահեալ սովն որ յանցեալ ամին եղև, կարծեմ թէ լեալ տեղեկացար պատմութեանն, զոր ոչ երբէք լեալ էաք ի հնոց հարց, կամ ի պատմութեանց զայսպիսի դառն պատուհաս՝ զոր կրեաց ժողովուրդ երկրիս միջագետի, ի պատճառէ մեղաց իւրեանց, որ ստուգիւ մարդն զմարդն եկեր, զորս տեսաք աչօք. թող զայնոսիկ զորս լաք ականջօք, եղեալ ի շրջակայս քաղաքիս. արդարև սարսափելիս և զարմանալիս մտաց մարդկան, յորմէ պատճառէ բազումք ի բնակչաց չւեցին յօտար երկիր, թերևս գտանիցեն զյագուրդ, բայց ոչ կարացին հասանիլ ի դիտեցեալ տեղին իւրեանց, այլ ի ճանապարհին սովամահք կորեան և եղեն կերակուրք վայրենի գազանաց. իսկ որք ասա մնացին, զոր ինչ ունէին գոյսս ոչ գնով վաճառեալք կերին, և ապա մաշեալք և հիւծեալք ի սովու, նուաղեցեալք մեռան ողորմելի, այնքան որ չորս բաժնի մէկն հազիւ թէ մնաց. բայց ի լրանալ տարւոյն, ողորմութիւն Տեառն ծագեալ ի յերկնից, ետ զառատութիւն ցորենոյ և ամենայն բարեաց, որով յագեցան լիութեամբ ամենայն բնակիչք երկրիս, զոր մշտապաղատ գոհութեամբ, անհանգիստ բերանով պարտիմք գոհանալ զտուողէն բարեաց, որ ողորմեցաւ ստեղծուածոց իւրոց։ Գերապատիւ Արքեպիսկոպոս եղբայրս մեր, այս 9 ամիս եղև, որ բերեալ ի մերտնու նստուցաք ի տան մերում, սակս սաստկութեան սովոյն, զի ի մերմին ոչ գտանիւր ամենևիմբ հաց, բայց կարի նուազեալ յամենայն զօրութենէ և վատեալ յաչաց տեսութենէ, և իբրու լուծեալ անդամօք, նստի անշրջիկ. ուստի աղօթս խնդրէ յեղբայրութենէ սրբոյ կրօնին, և ի քոյին Տէրութենէ. զի բարի վախճանաւ փոխեալ յաղցաւոր կենցաղոյս, արժանասցի մասին ժառանգութեան սրբոցն որ ի լոյս։ Նաև քանի անգամ գրեցի և խնդրեցի զպատմութիւն Լիսպօնայու մեծի քաղաքին. զի լաք թէ մեծ մասն ընկղմեցեալ է և զայս վասն այն խնդրեմ, զի զամենայն իրս նշանաւորս առդիպեալ ի մերում ժամանակի իբրու 50 ամաց հետէ և այսր, գրեմ պատմագրաբար, յիմացումն յետագայ ընթերցասիրաց, վասն որոյ աղաչեմ, զի գրել տացես ստուգութեամբ և առաքեսցես ինձ, զի և զայն ևս շարայարեցից ընդ այսց պատմութեանց...։

Ցամի Տեառն 1759
Փետրվարի 4 ի Տիգրանակերտ

Ցետնեալ և նուաստ ծառայ
Ցակոբ անպիտան դպիր
Տէր Պողոսեան

ՄԺԸ.

Հ. Ցակոբոս Զամչեան հիմնադիրն է Ս. Ղազարու Օրացոյց և գուշակ օդոցի։ Կու տայ հոս ընդարձակ նկարագրութիւնը Պոլսոյ մէջ կատարուած հսկայ լուսավառութեան՝ որ տեղի ունեցած է Մուստաֆա Գ.ի դստեր Հիյպէթ ուլլահ սուլթանի ծննդեան առթիւ։ Այդ հանդէսին ծախք գացած է «աւելի քան զհինգ միլիոն ստակ»։